«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N6

25.07.2025թ. գ. Ոսկեվան

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 23-րդ կետի 9-րդ ենթակետով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝

1. Սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ներքին կարգապահական կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահի Բ. Սաֆարյանին՝ ապահովել սույն որոշման տեղադրումը կայքում ու այլ միջոցներով հանրայնացումը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ ____________ ____________

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ ____________ ____________

25.07.2025թ.

Հավելված

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N6 որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ
«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) անդամների և աշխատակիցների ներքին կարգապահության հետ կապված հարաբերությունները:

2. Կազմակերպության անդամների և աշխատակիցների աշխատանքային ներքին կարգապահական կանոնները, Կազմակերպությունում կարգուկանոնը սահմանող, հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, Կազմակերպությանը մասնակցության/անդամության կամ Կազմակերպությունում աշխատանքի ռեժիմը սահմանող, Կազմակերպության առանձնահատկությունները արտահայտող և փոխհարաբերությունները կարգավորող նորմեր են, որոնք ուղղված են Կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովմանը, Կազմակերպության նպատակների իրագործման ապահովմանը և կարգապահության ամրապնդմանը:

3. Սույն կանոնների կիրառման, ինչպես նաև ներքին կարգապահության հետ կապված և սույն կանոններով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ և Խորհրդի որոշումներով:

4. Սույն կանոնները տարածվում են Կազմակերպության բոլոր անդամների և բոլոր աշխատակիցների վրա:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

5. Կազմակերպության անդամը և աշխատակիցը պարտավոր է՝

1) Կազմակերպության կամ Կազմակերպության անդամների անունից չզբաղվել քաղաքական գործունեությամբ.

2) Կազմակերպության կամ Կազմակերպության անդամներին չներգրավել կամ չփորձելու ներգրավել նախընտրական, ընտրական կամ քաղաքական այլ գործընթացներում.

3) ձեռնարկել օրենքով սահմանված բոլոր միջոցները՝ Կազմակերպության նպատակներն իրագործելու համար.

4) բարձր պահել Ոսկեվանցու և հայի անունն ու պատիվը, իր վարվելակերպով, բարեվարքությամբ և գործողություններով օրինակ հանդիսանալ երիտասարդ սերուններների համար.

5) ժամանակին վճարել Կազմակերպության անդամավճարը.

6) թույլ չտալ ֆինանսական, գույքային և այլ չարաշահումներ, խնամքով վերաբերվել հանձնարարված միջոցառումների կատարման նպատակով հատկացված տեխնիկային, ֆինանսական ու մյուս նյութական միջոցներին, դրանք օգտագործել ըստ նշանակության.

7) բարեխղճորեն մասնակցել Կազմակերպությանը, Կազմակերպության Ընդհանուր ժողովին և այլ միջոցառումներին.

8) ամենուր պահպանել էթիկայի կանոնները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք.

9) ժամանակին և բարեխղճորեն կատարել իրեն հանձնարարված աշխատանքները, ժամանակին վերացնել թերությունները.

10) Կազմակերպությունը, Կազմակերպության անունը և ծրագրերը չօգտագործել անձնական կամ խմբային շահերի համար.

11) ժամանակին և ճշգրտորեն կատարել օրենքների պահանջները, Ընդհանուր Ժողովի և Նախագահի որոշումներն ու հրամանները, այլ իրավական ակտերի պահանջները:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ Ի. Գևորգյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ Լ. Բաբայան